Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 42

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ն. Արսենյանը, Ս. Բադալյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Ներսիսյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 163-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

6. <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Տեղական վճար սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուները <<Յուքոմ>> ՓԲԸ-ին վարձակալության տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

9. Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Է. Փարվանյան/

10. <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի սեփականություն հանդիսացող շարժական գույքն աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ատոմյան/

11. <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կողմից Աշտարակ համայնքում իրականացվող աղբահանության գործունեության վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/

12. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Աշտարակ համայնքի Արտաշավան և Կոշ բնակավայրերում թաղամասի և փակուղու համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

14. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Սաղմոսավան, Ուշի, Անտառուտ, Կարբի, Ղազարավան և Ոսկեվազ բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

15. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

16. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

17. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

18. Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու անվան հրապարակում գտնվող <<Կենաց ծառ>> քանդակի տեղափոխման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

19. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N163-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 163-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և Աշտարակ համայնքի 2024թ.-ի տարեկան բյուջեի 1-6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

/հազ. դրամ/

	Վարչական բյուջե	***Ֆոնդային բյուջե***	***Ընդամենը***
Եկամտային մաս	4559212.4	3000000.0	6409212.4
Ծախսային մաս	4571616.1	3470720.4	6892336.5
Դեֆիցիտ	- 12403.7	- 470720.4	- 483124.1
Պահուստային ֆոնդ	1150000.0	0	1150000.0

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով 2024թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի 2024թ. տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից 1 միլիարդ 150 մլն դրամի չափով ուղղել ֆոնդային բյուջե՝ 04-5-1 և 06-3-1 բնագավառներում առաջացած ծախսերի ֆինանսավորման համար:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, ի գիտություն ընդունել 2024 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը.

	Վարչական բյուջե	***Ֆոնդային բյուջե***	***Ընդամենը***
Եկամտային մաս	3205374.9	1186279.9	3491654.9
Ծախսային մաս	3028292.6	1589620.5	3717913.1

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *Հարկային արտոնություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին

մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>> օրենքների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի, 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն /հավելված 1/:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - *<<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ, 34-րդ, 37-րդ հոդվածների պահանջներով, հաստատել <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 15.02.2024թ. N 17-Ա որոշումը:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - *Տեղական վճար սահմանելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և 38-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, ընդհանուր ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ սպասարկման ծառայությունների իրականացման համար սահմանել տեղական վճար՝ համաձայն հավելվածի:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուները <<Յուքոմ>> ՓԲԸ-ին վարձակալության տրամադրելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական

ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ՝ Աշտարակ համայնքում օպտիկական մալուխների անցկացման համար համայնքի սեփականություն հանդիսացող հենասյուներն անորոշ ժամկետով, ամսական մեկ հենասյան համար 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ վարձավճարով <<Յուքոմ>> ՓԲԸ-ին վարձակալության տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ Էմմա Փարվանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Տիգրան Ավագյանի 17.07.2024թ. թիվ 8020 դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 3-րդ փ., 1 նրբ., թիվ 23 տան բնակիչ, Տիգրան Վահանի Ավագյանին 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի սեփականություն հանդիսացող շարժական գույքն աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<ԱՆՏ ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից 01.10.2024թ. տրված KAMAZ մակնիշի 012 CN 61 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի

վերաբերյալ գնահատումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի սեփականություն հանդիսացող KAMAZ մակնիշի 012 CN 61 հաշվառման համարանիշի /VIN X5H427723C0000010/ հատուկ աղբատար տրանսպորտային միջոցն աճուրդ-վաճառքով օտարելու և 9 000 000 /ինը միլիոն/ ՀՀ դրամ մեկնարկային գին սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *<<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կողմից Աշտարակ համայնքում իրականացվող աղբահանության գործունեության վերաբերյալ համաձայնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ս. Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի տնօրեն Է. Մելիքյանի ծանուցումը /մուտք՝ 26.08.2024., թիվ 9530/, հանրային լսման արդյունքը և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի /ընդունված 03.05.2023թ./ 12-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի կողմից Աշտարակ համայնքում իրականացվող աղբահանության գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Աբրահամ Քեշիշյանի 24.09.2024թ. N 10842 դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի

48[1] հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի ա) ենթակետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, թույլատրել Աշտարակ քաղաքի Ալ. Դատումյան փողոց, N 27/2 հասցեում գտնվող, 02-001-1265-0003 ծածկագրով 19,53քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Աբրահամ Վարուժի Քեշիշյանին տրամադրելու 50 /հիսուն/ տարի ժամկետով՝ տարեկան 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ վճարով:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Աշտարակ համայնքի Արտաշավան և Կոշ բնակավայրերում թաղամասի և փակուղու համարակալման մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրում գտնվող թաղամասին տալ 22 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Արտաշավան բնակավայր, 22-րդ թաղամաս:

2. Աշտարակ համայնքի Կոշ բնակավայրի 1-ին փողոցից սկիզբ առնող փակուղուն տալ 11 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Կոշ բնակավայր, 1-ին փողոց, 11-րդ փակուղի:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Սաղմոսավան, Ուշի, Անտառուտ, Կարբի, Ղազարավան և Ոսկեվազ բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները

համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 27.08.2024թ. N 2/փ-341 և N 2/փ-342, 09.09.2024թ. N 2/փ-362, 16.09.2024թ. N 2/փ-376, 18.09.2024թ. N 2/փ-377 և N 2/փ-378 և 20.09.2024թ. N 2/փ-380 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում, Սաղմոսավան, ՈՒշի, Անտառուտ, Կարբի, Ղազարավան և Ոսկեվազ բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-001-0012-0505 ծածկագրով 0,07հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-093-0002-0090 ծածկագրով 0,075հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

3. Հաստատել Աշտարակ համայնքի ՈՒշի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-108-0247-0230 ծածկագրով 0,06708հա մակերեսով հողամասից 0,06207հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

4. Հաստատել Աշտարակ համայնքի Անտառուտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-010-0110-0233 կադաստրային ծածկագրով 1.45168 հա մակերեսով (որից՝ 1.43215 հա արոտավայր, 0.01953 հա խոտհարք), 02-010-0110-0230 կադաստրային ծածկագրով 0.10303 հա մակերեսով (որից՝ 0.00162 հա արոտավայր, 0.10141հա խոտհարք) և 02-010-0110-0231 կադաստրային ծածկագրով 0.05685 հա մակերեսով (որից՝ 0.0217 հա արոտավայր, 0.03515 հա խոտհարք) գյուղատնտեսական նպատակային նշանակության (ընդամենը՝ 1.45547 հա արոտավայր և 0.15609 հա խոտհարք) հողամասերի նպատակային

նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

5. Հաստատել Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-058-0348-0022 կադաստրային ծածկագրով 1.4154հա մակերեսով (1.3426հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք, իսկ 0.0726հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր) հողամասից 0.3425հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

6. Հաստատել Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-068-0001-0022 ծածկագրով 0,06հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

7. Հաստատել Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-087-0506-0001 ծածկագրից 0,04062հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 15 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<ԱՎԱԼԱՆԺ>> ՍՊԸ-ի լիազորված անձ Մանուկ Մուրադյանի 13.08.2024թ. N 9022, Սարգիս Գրիգորյանի 05.09.2024թ. N 10018, Արտակ Մաթևոսյանի 23.09.2024թ.

N 10761, Սուսաննա Հովսեփյանի 26.09.2024թ. N 10922, Նվեր Բագրատյանի 30.09.2024թ. N 11036, Հրայր Հակոբջանյանի 01.10.2024թ. N 11103 և Արման Պողոսյանի 01.10.2024թ. N 11098՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ագարակ բնակավայրի 02-004-0223-0182 ծածկագրով, <<ԱՎԱԼԱՆԺ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,31255հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0371-0048 ծածկագրով, Սարգիս Լյովայի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 0,297302հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /կորիզավոր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0504-0005 ծածկագրով, Արտակ Արմենի Մաթևոսյանին և Աղասի Եփրեմի Մանուկյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0,4392հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0099-0052 ծածկագրով, Սուսաննա Առաքելի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող 0,9962հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

5. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0099-0051 ծածկագրով, Սամվել Գարեգինի Ղազարյանին և Արմենուհի Հովհաննեսի Հովհաննիսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 1,5հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

6. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0328-0002 ծածկագրով, Նվեր Բաբկենի Բագրատյանին սեփականության իրավունքով պատկանող 0,26հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

7. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0639-0045 ծածկագրով, Հրայր Մելսիկի Հակոբջանյանին սեփականության իրավունքով պատկանող 0,5331հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /հնդավոր և այլ հողատեսք/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

8. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրի 02-020-0102-0683 ծածկագրով, Արման Արտակի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 5,0հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 16 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Կարապետ Հայրապետեանի 05.09.2024թ. N 10032, <<ԻՆՖԻՆԻԹ ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի տնօրեն Լևոն Նազարեանի 01.10.2024թ. N 11136, Նաիրի Մարգարյանի 18.09.2024թ. N 10571, Անդրանիկ Ղուկասյանի 18.09.2024թ. N 10580, Աշոտ Հովհաննիսյանի 19.09.2024թ. N 10654, Կարինա Հարությունյանի 27.09.2024թ. N 10993, Սիրանուշ Բոցինյանի 30.09.2024թ. N 11074, Վիգեն Քեշիշյանի 30.09.2024թ. N 11029, Լևոն Թադևոսյանի 30.09.2024թ. N 11030, Մետաքսյա Մուրադյանի 02.10.2024թ. N 11187 և Մարինե Հարությունյանի 30.09.2024թ. N 11054 և N 11055 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ և 8-րդ ենթակետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Տեղեր բնակավայրի Այգեգործական թաղամաս, 1-ին փողոց, N 17 հասցեում գտնվող, 02-106-0102-0034 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 144,4քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-106-0102-0021 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Կարապետ Հայրապետի Հայրապետեանին:

2. Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 02-068-0676-0001 ծածկագրից 0,021հա այլ հողատեսքը ուղղակի վաճառքով՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից ընդլայնվող 02-068-0676-0005 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասերի սեփականատեր <<ԻՆՖԻՆԻԹ ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ին:

3. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 02-001-0644-0032 ծածկագրով 0,0302հա հողամասը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0644-0008 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի բաժնային սեփականատերեր Նաիրի Համլետի Մարգարյանին և Վարյա Թելմանի Դիլանյանին:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Արա-1 թաղամաս, 6-րդ փողոց, N 19/1 հասցեում գտնվող, 02-001-0148-0024 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 250քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0148-0002 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Անդրանիկ Էդվարդի Ղուկասյանին:

5. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի 7-րդ թաղամաս, N 51/1 հասցեում գտնվող, 02-001-0368-0049 ծածկագրով 129,3քմ և Մուղնի 7-րդ թաղամաս, N 51/2 հասցեում գտնվող, 02-001-0368-0051 ծածկագրով 245,3քմ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 100%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0368-0040 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի բաժնային սեփականատերեր Վաչագան Հովհաննիսյանին, Աշոտ Սամվելի Հովհաննիսյանին և Մարգարիտա Հակոբյանին:

6. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 02-001-0698-0015 ծածկագրով 0,0329հա հողամասը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող

02-001-0698-0003 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր Արմեն Հրայրի Փարվանյանին:

7. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Արա-1 թաղամաս, 5-րդ փողոց, N 20/1 հասցեում գտնվող, 02-001-0148-0023 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 226քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0148-0021 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Կարինա Համոյի Հարությունյանին:

8. Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-087-0048 և 02-087-0014 ծածկագրերից, համայնքային սեփականություն հանդիսացող 12,15քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 100%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-087-0048-0011 ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր Սիրանուշ Գագիկի Բոցինյանին:

9. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0139-0122 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 379քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0139-0081 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Վիգեն Կարապետի Քեշիշյանին:

10. Աշտարակ համայնքի Բազմաղբյուր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 02-024-0047-0005 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 337,4քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 100%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-024-0047-0001 ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր Լևոն Մկրտիչի Թադևոսյանին:

11. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0149-0022 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 263քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0149-0002 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Մետաքսյա Սմբատի Մուրադյանին:

12. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի 8-րդ թաղամաս, N 4/1 հասցեում գտնվող, 02-001-0441-0105 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 56քմ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր նպատակային նշանակության պահեստարանների գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 100%-ի չափով/ օտարել <<ՄԱՆՈՒԿ>> ընտանեկան ձեռնարկության իրավահաջորդներ Գագիկ, Ռուզաննա և Մարինե Մանուկի Հարությունյաններին:

13. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0441-0102 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 1,4944հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 100%-ի չափով/ օտարել <<ՄԱՆՈՒԿ>> ընտանեկան ձեռնարկության իրավահաջորդներ Գագիկ, Ռուզաննա և Մարինե Մանուկի Հարությունյաններին:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 17 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 18 - Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու անվան հրապարակում գտնվող <<Կենաց ծառ>> քանդակի տեղափոխման մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ընթանում են Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու անվան հրապարակի հիմնանորոգման աշխատանքներ, ուստի առաջարկվում է համաձայնություն տալ <<Կենաց ծառ>> քանդակը տեղափոխելու Աշտարակ քաղաքի Կոմիտասի անվան քաղաքային զբոսայգու տարածք:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի և Ն. Մուրադյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ, ինչպես նաև ելույթներով հանդես եկան համայնքի ավագանու այլ անդամներ:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 19 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2024 թվականի նոյեմբերի 11-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2024 թվականի հոկտեմբերի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ **Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ